Հավելված N 2
2026 թվականի հունվարի 23-ին կնքված
1032-11002/2026-ԱՀԵՏ1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 (Նոր Նորք, Ավան, Զեյթուն, Արաբկիր, Նուբարաշեն) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026 – 31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026-30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 03.06.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:30:13 AMT

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 176 շահառուի Նոր Նորք, Ավան, Նուբարաշեն, Արաբկիր և Քանաքեռ- Զեյթուն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 28 դեպքի վարում (21 վերափաստագրում, 4 աջակցող միջոցի ստացում, 1 շահառուի համար նոր անձնագրիի ձեռք բերում, 2 հաշմանդամության կարգավիճակի փոփոխություն): Թվով 51 շահառուների համար կատարվել է գնումների և վճարումների իրականացում, սոցիալական աշխատողը թվով 73 շահառուի միջնորդել և ուղղորդել է թաղապետարան՝ աղբահանության վճարների արտոնություններից օգտվելու նպատակով: Թվով 15 շահառու ուղեկցվել է անձնագրային բաժանմունք՝ նոր անձնագիր ստանալու նպատակով, բանկ, բժշկական հաստատություն, թաղապետարան: 10 շահառու սոցիալական աշխատողի միջնորդությամբ Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի կողմից ստացել է սննդի և հիգիենիկ պարագաների աջակցության փաթեթ, իսկ 1 շահառու կույրերի կոմբինատից ստացել է ֆինանսական աջակցություն:
Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 14 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, 8 շահառու հետ իրականացվել է անհատական հոգեբանական խորհրդատվություն/ 27 անգամ, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:
Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել են 10 միջոցառումներ, համերգներ, էքսկուրսիաներ, որոնց մասնակցել են թվով 4 շահառու:

- «Արևի նման նայեցեք աշխարհքին» Հ. Թումանյանին նվիրված ցերեկույթ՝ Համո Սահյանի անվան գրադարանում

Արամ Խաչատրյան» համերգասրահում.

- Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ Բռամսի ջութակի կոնցերտ, մենակատար Ալիսա Մարգուլիս համերգ,
- Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի, Հովեր երգչախմբի և Հայաստանի պետական երգչախմբի համատեղ համերգին մենակատար Սերգեյ Կռիլով
- Հայաստանի պետական կամերային նվագախումբ Վիվալդիի և Պագանինիի ջութակի և նվագախմբի համար գլուխգործոցները՝ Նիկոլայ Մադոյան և Հայկ Կազազյան
- Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի, երկու համերգները Եվրոպական հյուրախաղերից առաջ՝ մենակատարներ Էտտորե Պագանո և Եվա Գևորգյան
- Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, դասական երաժշտության չքնաղ երեկո՝ մենակատար Շահրազադե սիմֆոնիկ սյուիտ մենակատար Աննա Անդրիասովա
- Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Մոցարտ հոբոյի կոնցերտ
- Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի, թավջութակահար՝ Աստրիկ Սիրանոսյանի համերգին
- Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի բացման և փակման համերգներին
- Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Բեթհովեն 7-րդ սիմֆոնիա

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 176 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 176 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը, բժշկական մասնագիտական խորհրդատվություն է տրամադրվել: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 93 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշակական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 40 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ ախտորոշման, բուժման նպատակով: Թվով 14 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, կատարվել է վերքի մշակում, վիրակապի փոխում (շարունակական), 52 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 46 շահառուի համար ձեռք է բերվել ուղեգիր հիվանդանոցում հետազոտվելու նպատակով, 26 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական): Թվով 19 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 39 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնում, 47 շահառուի համար պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

1. «Արևի նման նայեցեք աշխարհին» Հ. Թումանյանին նվիրված ցերեկույթ՝ Համո Սահյանի անվան գրադարանում (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://surl.li/cysryb

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Համապատասխան տարածքները սպասարկող սոցիալական աշխատողները մասնակցել են Երևանի բոլոր վարչական տարածքներում ՄԾՏԿ-ների խորհրդատվական նիստերին եւ եռամսյակային ֆորումներին:
- ✓ «ՔՈՓՐՈԴԱՔՇՆ» հանդիպում, որի ընթացքում քննարկվել են ՀԱԽՈւ անձանց վերաբերյալ հիմնախնդիրները, գործող «Հուզական թեժ գիծ» ծրագրի մանրամասները, մասնակցել են Նոր Նորք և Ավան սոցիալական աշխատողները
- ✓ Բռնության դեպքերի և տրավմայի հետ սոցիալական աշխատանք առցանց դասընթաց մասնակցել է Նոր Նորք և Ավան սոցիալական աշխատողը
- ✓ Հոգեբանական տրավմա առցանց դասընթաց, մասնակցել է Նոր Նորք և Ավան սոցիալական աշխատող
- ✓ Ցավի Կառավարում տեխնիկաները, կիրառումը, թերապևտիկ աշխատանքի գործընթաց առցանց դասընթաց մասնակցել է Նոր Նորք և Ավան սոցիալական աշխատող
- ✓ Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում: Տարեցների իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանում սոցիալական խարտիայի համաձայն մասնակցել է Նոր Նորք և Ավան սուպերվիզորը /մայիսի 14-15 առկա հանդիպում/
- ✓ «Նռնենի» խնամքի պատասխանատուն, Նոր Նորք և Ավան բուժքույրերը Ամերիկյան համալսարանում մասնակցել են «Նոր դարաշրջանի բուժքույրական գործ» թեմայով կոնֆերանսին: /սեփական միջոցներով 8 կրեդիտ միավոր/
- ✓ «Նռնենի» համայնքային կենտրոնի պատասխանատուն և հոգեբանը Արմավիր մարզում մասնակցել է «ՖՄԴ հանրայնացում և զարգացում»՝ «Անձի ֆունկցիոնալության

գնահատում. օրենսդրություն, միջազգային մոտեցումներ և գործիքներ» վերապատրաստման դասընթացներին «Հավասարություն և մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար» ծրագրի շրջանակում:

- ✓ «Նռնենի» ՀԿ-ի թիմ լիդերը և բազմամասնագիտական թիմը մասնակցել են ՓԻՆ-ի «Անձի Ֆունկցիոնալության գնահատման համակարգը» թեմայով առցանց հանդիպմանը:
- ✓ Նոր Նորք և Ավան բազմամասնագիտական թիմը,«Նռնենի» թիմ լիդերը, բազմամասնագիտական թիմը մասնակցել են «SPHERE ընթացակարգեր, սեռական շահագործման, բռնության, հետապնդման կանխանգելում և վարքագծի կանոնագիրք» դասընթացին, որը կազմակերպվել էր «Էյ Էս Բի» կազմակերպության կողմից:
- ✓ «Նռնենի» թիմ լիդերը Աշխատանքի և սոցիալական նախարարությունում մասնակցել է «Վորլդ Վիժն Հայաստան» երեխաների պաշտպանության հիմնադրամի և Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «ՖՄԴ հանրայնացում և զարգացում» ծրագրի շրջանակում մշակված՝ ՖՄԴ հիմքով համապարփակ գնահատման և անհատական աջակցության պլանավորման գործիքակազմի ներկայացման և քննարկման նպատակով կազմակերպվող հանդիպմանը:
- ✓ «Նռնենի» ՀԿ-ի թիմ լիդերը և բազմամասնագիտական թիմը առցանց մասնակցել են «հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքները» թեմայով դասընթացին:
- ✓ «Նռնենի» թիմ լիդերը և հոգեբանը Ակնաշենի փոքր տանը մասնակցել են «Արտակարգ իրավիճակներում ՀՈՒԱ ներառական արձագանքման պլանների մշակում և փորձարկում» դասընթացին:
- ✓ Եռամսյակի ընթացքում հոգեբանը մասնակցել է 4 ժամ խմբային սուպերվիզիայի՝ սեփական նախաձեռնությամբ:
- ✓ Եռամսյակի ընթացքում հոգեբանը մասնակցել է 9 ժամ հուզական այրումը կանխարգելող բալինտյան խմբային աշխատանքի՝ սեփական նախաձեռնությամբ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 175/176 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 155 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 14 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 10 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 14 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 161 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –22<br>Բ -154 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 176 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 176 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 176 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և 10 միջոցառումների կազմակերպում | 4 |
| 6. | խորհրդատվական օգնություն /Իրավաբանի խորհրդատվություն/ | 2 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>հոգեբանական խորհրդատվություն | <br>14 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ « 03» 07.2026թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)